ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ




ԹԵՐԵԶԱ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Humanitarian Aid and Civil Protection

unicef

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Թ. ԴԻԼԲԱՐՅԱՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուղեցույց նախադպրոցական կրթական հաստատությունների և տարրական դպրոցի մանկավարժների համար

Գրքույկը երաշխավորված է գործածության
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Humanitarian Aid
and Civil Protection

ԵՐԵՎԱՆ 2016

ՀՏԴ 373:02(07)
ԳՄԴ 74.00+20.1y7
Դ 477

Հեղինակ՝ Թերեզա Դիլբարյան
Խմբագիրներ՝ Արա Բարսեղյան, Տիգրան Թովմասյան
Ձևավորողներ՝ Վահագն Սարգսյան, Վահան Ալավերդյան

Աղետների ռիսկի նվազեցման կրթություն
Դ 477 **Մանկավարժների և ծնողների համագործակցությունը երեխաների անվտանգ դաստիարակության գործում**

Ուղեցույց նախադպրոցական կրթական հաստատությունների և տարրական դպրոցի մանկավարժների համար

Սույն ուղեցույցը նախատեսված է նախադպրոցական տարիքի երեխաների և տարրական դպրոցի աշակերտների աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) կրթության համար: Այն նվիրված է մանկավարժի և ծնողի համագործակցությանը երեխայի անվտանգ դաստիարակության գործում: Ուղեցույցը ներառում է ԱՌՆ կրթության հարցերով ծնողական ժողովների կոնսպեկտներ, տարաբնույթ առաջադրանքներ, ծնողների համար նախատեսված հարցաթերթիկներ և հուշաթերթիկներ, ծնողներին ուղղված ուղերձներ և այլն: Ուղեցույցի առաջադրանքները կազմված են այնպես, որ ծնողները երեխաների ԱՌՆ կրթությունը շարունակեն ընտանիքում:

ISBN 978-99941-2-907-2

ՀՏԴ 373:02(07)
ԳՄԴ 74.00+20.1y7

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժի և ծնողի համագործակցությունը երեխաների անվտանգ դաստիարակության գործում 5
ԱՌՆ կրթության հարցերով ծնողական ժողովների կոնսպեկտներ 6
Ծնողական ժողովի անցկացման Պ լ ա ն 1. 7
Ծնողական ժողովի անցկացման Պ լ ա ն 2. 13
Երեխաների ԱՌՆ կրթությունը թեմատիկ նկարների միջոցով:
Անվընտանգությունը տանը և շրջակա միջավայրում 17
Հավելված 1. Հուշաթերթիկ ծնողների համար 21
Հավելված 2. Հուշաթերթիկ ծնողների համար 22
Հավելված 3. Ուղերձներ ծնողներին 24
Հավելված 4. Ընտանիքի աղետի պատրաստվածության պլան..... 25

Մանկավարժի և ծնողի համագործակցությունը երեխաների անվտանգ դաստիարակության գործում

Երեխաների կյանքի և առողջության պահպանումը հանդիսանում է մանկավարժի, հասարակության և ծնողների կարևորագույն խնդիրը:

Ծնողական ժողովը հանրակրթական ուսումնական հաստատություններում եղել և մնում է մանկավարժների՝ ծնողների հետ աշխատելու և համագործակցելու ամենատարածված ձևը: Առաջին հայացքից թվում է, թե նոր ժամանակները համագործակցության նոր եզրեր և եղանակներ պետք է առաջարկեն: Ամենևին …

Ծնողական ժողովներն իրենց ավանդական և ոչ ավանդական ձևերով հանդիսանում են այդ համագործակցութան անբաժանելի մասը և մանկավարժի՝ ծնողի հետ աշխատելու առավել արդյունավետ ձևը՝ հատկապես երեխայի դաստիարակության ու զարգացման նախնական փուլում:

Երեխաների անվտանգության ապահովման բնագավառում ծնողներին ակտիվացնելու և պատրաստելու նպատակով ծնողական ժողովների ժամանակ մանկավարժները կարող են կիրառել մանկավարժական տարբեր փոխներգործոն (ինտերակտիվ) մեթոդներ (խաղարկային, իրավիճակային, թեստային, հարցաթերթիկների լրացման և վերլուծության, անվտանգության թեմաներով մուլտֆիլմերի, տեսաֆիլմերի ցուցադրման և քննարկման):

Ծնողական ժողովին մանկավարժը կարող է հրավիրել մեթոդիստ-հոգեբանի, ճանապարհային ոստիկանության, հրդեհային անվտանգության, փրկարար ծառայության, բժշկական ծառայության ներկայացուցիչների և անվտանգության հետ առնչվող այլ մասնագետների:

Առաջարկում ենք ծնողական ժողովների անցկացման կոնսպեկտների մշակումներ «Երեխաների անվտանգությունը տանը և ուսումնական հաստատությունում» թեմայով:

ԱՌՆ կրթության հարցերով ծնողական ժողովների անցկացման կոնսպեկտներ

Ծնողական ժողովի անցկացման կոնսպեկտի[1]

Նպատակը.

1. երեխաների կյանքի և առողջության անվտանգության ապահովումը տանը, ուսումնական հաստատությունում և շրջակա միջավայրում,
2. ծնողների մոտ երեխաների անվտանգության հարցերի կարեվորության գիտակցության մակարդակի բարձրացումը և պատասխանատվության ձևավորումը,
3. ԱՌՆ կրթության միջոցով ծնողների մոտ անվտանգության մշակույթի ձևավորումը:

Խնդիրները.

1. ծնողներին ծանոթացնել «Երեխաների անվտանգությունը ուսումնական հաստատութ-յունում» թեմայով իրականացվող ուսումնական գործընթացին,
2. ակտիվացնել ծնողների գիտելիքներն անվտանգության բնագավառում՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, ուսումնական հաստատությանը և համայնքին բնորոշ վտանգները,
3. երեխաների մոտ անվտանգ վարվելակերպի կանոնների ուսուցում և հմտությունների ձևավորում՝ ծնողների ու մանկավարժների համագործակցության և փոխգործողությունների իրականացման միջոցով ԱՌՆ կրթության շրջանակներում:

Անցկացման ձևը՝ գործնական պարապմունքներ:

Մասնակիցները՝ մանկավարժներ, ծնողներ, հրդեհային անվտանգության, փրկարար ծառայության և այլ շահագրգիռ կառույցների մասնագետներ:

---

1 Նյութը նախատեսված է նախադպրոցական կրթական հաստատությունների և տարրական դպրոցի մանկավարժների համար

Ծնողական ժողովի անցկացման
Պ լ ա ն 1

1. Ներածական խոսք
2. Անվտանգության հարցերով հարցաթերթիկի լրացում
3. Հարցաթերթիկի ամփոփում
4. Եզրակացություն

Ծնողական ժողովի ընթացքը

1. Ներածական մաս

Մանկավարժ.

Այսօր մեր հանդիպումը նվիրված է մի շատ կարևոր թեմայի՝ անվտանգության բնագավառում երեխաների մոտ հմտությունների և կարողությունների ձևավորմանը: Ձեզ մոտ կարող է հարց առաջանալ, օրինակ, թե ինչու՞ է երեխային անհրաժեշտ իմանալ ճանապարհային երթևեկության կանոնները, եթե նա փողոցն անցնում է ծնողի ուղեկցությամբ: Կամ, արդյո՞ք պետք է երեխային՝ իմանալ հրդեհային անվտանգության կանոնները կամ երեխաների անվտանգության հետ առնչվող այլ հարցեր, եթե թե՛ տանը, թե՛ ուսումնական հաստատությունում երեխաներին վերահսկում են մեծահասակները (դաստիարակները, ուսուցիչները, ծնողները):

Մենք պետք է հիշենք մի կարևոր հանգամանք. երեխաների գիտակցական վարքագծի ձևավորումը երկարատև ու շարունակական գործընթաց է, և անհրաժեշտ է սկսել այն կրտսեր տարիքից: Այսօր երեխան դպրոց կամ մանկապարտեզ գնում է մայրիկի ձեռքը բռնած, իսկ վաղը՝ դառնալու է ինքնուրույն ճանապարհային երթևեկության մասնակից՝ հետիոտն, ուղևոր կամ վարորդ:

Այսպիսով, տանը, փողոցում և շրջակա միջավայրում անվտանգության ապահովման նպատակով երեխաների ուսուցումը երկարատև ու շարունակական գործընթաց է, որը պետք է լինի նպատակային և արդյունավետ: Այստեղ միայն տեսական գիտելիքները բավարար չեն: Իսկ դրանց գործնական կիրառումը հիմնականում ընկնում է ձեր՝ ծնողներիդ ուսերին:

Հարգելի ծնողներ,

Խնդրում եմ լրացնել ձեզ համար նախատեսված հարցաթերթիկը՝ անկեղծորեն պատասխանելով տրված հարցերին:

Ձեր պատասխանները թույլ կտան գնահատել, թե դուք որքանով եք կարևորում ձեր երեխաների անվտանգության խնդիրները, և որքանով է նպատակահարմար նման ժողովների անցկացումը:

Ծնողները լրացնում են հարցաթերթիկը:

2. Հարցաթերթիկ ծնողների համար

- Հայտնվե՞լ է Ձեր երեխան վտանգավոր իրավիճակում տանը, փողոցում, բակում, շրջակա միջավայրում: *(Բերել օրինակներ)*

  _____

  _____

- Եթե Ձեր երեխան նախապես իմանար իր գործողությունների հետևանքների մասին, կկարողանա՞ր խուսափել այդ վտանգից:

  _____

  _____

- Ծանոթացնու՞մ եք Ձեր երեխային վտանգավոր առարկաների հետ վարվելու կանոններին: Ինչպե՞ս: _____

  _____

- Խոսու՞մ եք երեխայի հետ անծանոթ մարդկանց հետ շփվելու ժամանակ անվտանգության կանոնների պահպանման մասին: *(Բերել օրինակներ)*

  _____

  _____ _____

- Ինչպե՞ս եք Ձեր երեխայի մոտ դաստիարակում խնայողական, հոգատար և սրտացավ վերաբերմունք շրջապատի (բնության) նկատմամբ: *(Բերել օրինակներ)* _____

  _____

- Զբաղվու՞մ եք Ձեր երեխայի ֆիզիկական պատրաստվածությամբ: Ինչպե՞ս _____

  _____

- Ծանո՞թ է Ձեր երեխան ճանապարհային երթևեկության որոշ կանոնների: Որո՞նց

  _____

  _____

- Ձևավորելով Ձեր երեխայի մեջ անվտանգ վարքագիծ՝

  ա) Դուք գործու՞մ եք ուղղակի արգելքների միջոցով. «ձեռք չտաս», «հեռացիր», «չի կարելի».

  _____

  _____

- բ) Դուք փորձու՞մ եք մանրամասն բացատրել ստեղծված (հնարավոր) իրավիճակը (հետևանքները).

  _____

  _____

- գ) Գործու՞մ եք այլ կերպ._____

  _____ _____

  _____

- Խրախուսու՞մ եք երեխային անվտանգ վարքագիծ դրսևորելու համար: Ընդգծել ճիշտ պատասխանը

  միշտ ***հազվադեպ*** ***երբեմն*** ***երբեք***

- Ըստ Ձեզ՝ նպատակահարմա՞ր է ուսումնական հաստատությունում անցկացնել հատուկ կազմակերպված պարապմունքներ անվտանգության հարցերով:

  _____

  _____

- Երեխաների անվտանգության հիմունքների որ թեման եք համարում առավել կարևոր (ընգծել).
    1. Երեխան և այլ մարդիկ,
    2. Երեխան դպրոցում (մանկապարտեզում),
    3. Երեխան տանը,
    4. Երեխան և բնությունը,
    5. Առողջությունը և երեխայի հուզական աշխարհը,
    6. Երեխան փողոցում:

- Պատրաստ եք մասնակցելու ներկայացված թեմաների քննարկմանը կամ նույն թեմայով տարբեր միջոցառումների անցկացմանը:

- Պատրաստ եք աջակցել երեխաների անվտանգ վարքի կանոնների և հմտությունների ձևավորմանը և ամրապնդմանը: _____
_____
_____

- Ինչ է անվտանգությունը: _____
___ _____

- Ինչպես պետք է ծնողը ապահովի իր երեխայի կյանքի և առողջության անվտանգությունը: _____
_____
_____

- Ձեր առաջարկությունները: _____
_____ _____
_____ _____
_____

Ուսուցիչը կարող է ավելացնել նոր հարցեր կամ փոխարինել հարցերը՝ ելնելով տվյալ դպրոցի կամա համայնքի առանձնահատկություններից կամ համատեքստից:

3. Հարցման արդյունքների ամփոփում

Ուսումնական հաստատություններում երեխաների անվտանգության բնագավառում տարվող աշխատանքը շարունակական է և պարբերական: Այն կազմում է ուսումնական հաստատությունում իրականացվող համալիր ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մասը:

Աշխատանքը տարվում է մի քանի ուղղություններով.

1. **«Երեխան և այլ մարդիկ»**

Այստեղ ներկայացվում են այն վտանգները, որոնք կարող են տեղ գտնել երեխաների՝ օտար մարդկանց հետ շփման դեպքում, քանի որ միշտ չէ, որ մարդու հաճելի արտաքինը համընկնում է նրա բարի մտադրությունների հետ: Ներկայացվում է նաև երեխայի վարքագիծը, որ նա պետք է դրսևորի նման իրավիճակում:

2. «**Երեխան և բնությունը**»

Խոսվում է շրջակա միջավայրի աղտոտվածության, կենդանի բնության հանդեպ մարդու հոգատար և խնայողական վերաբերմունքի դրսևորման, թունավոր բույսերի, կենդանիների հետ շփման մասին:

3. «**Երեխան տանը**»

Խոսվում է հրդեհավտանգ, կտրող և ծակող առարկաների, պատշգամբի, բաց պատուհանի և այլ կենցաղային վտանգների, ինչպես նաև՝ արտակարգ իրավիճակներում հեռախոսից օգտվելու հմտությունների մասին:

4. «**Առողջությունը և երեխայի հուզական աշխարհը**»

Ուսումնասիրվում է օրգանիզմի կառուցվածքը, ձևավորվում են անձնական հիգիենայի հմտություններ, պարզաբանվում է վիտամինների և դեղերի նշանակությունը, ձևավորվում է սրտացավ վերաբերմունք հիվանդ մարդու նկատմամբ, բացահայտվում են մանկական վախերը, հակասությունները երեխաների միջև և այլն:

5. «**Երեխան փողոցում**»

Ներկայացվում են ճանապարհային երթևեկության կանոնները, վարքի կանոնները տրանսպորտում և փողոցում:

Նյութը լավ յուրացնելու նպատակով օգտագործվում են տարբեր դիդակտիկ ձեռնարկներ և խաղեր: Դիդակտիկ խաղերը նպաստում են կամայական և ակտիվ ուշադրության զարգացմանը, ձևավորվում են տարածության մեջ կողմնորոշման և իրավիճակին արագ արձագանքման հմտություններ և կարողություններ:

4. Եզրակացություն

Մանկավարժ

1. Երեխաներին պետք է տալ որոշակի գիտելիքներ անվտանգության բնագավառում և ձևավորել անվտանգ վարքագիծ ուսումնական հաստատությունում, տանը, բակում, փողոցում:
2. Երեխաներին պետք է սովորեցնել տարբեր բնույթի արտակարգ իրավիճակներում գործել գիտակցված և համարժեք իրավիճակին:
3. Երեխաների մոտ զարգացնել ինքնուրույնություն և պատասխանատվություն:

Ամփոփելով ժողով-պարապմունքը, ուզում եմ ընդգծել, որ մեծահասակների (մեր՝ մանկավարժների, ձեր՝ ծնողների) խնդիրը կայանում է ոչ միայն նրանում, որ պաշտպանենք և պահպանենք երեխային շրջապատի վտանգներից, այլև՝նախապատրաստենք նրանց դիմակայելու բարդ, հաճախ՝ վտանգավոր իրավիճակներին, որոնք կարող են առաջանալ տանը, դպրոցում, փողոցում և բակում:

Սիրելի ծնողներ,

Եկեք օգնեցեք երեխաներին կյանք մտնել նվազագույն ռիսկերով և արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ առավելագույն գիտելիքներով ու հմտություններով:

Խնդրում եմ ծնողներին արտահայտվել (բանավոր կամ գրավոր)՝ նման ծնողական ժողովների կարևորության մասին, ինչպես նաև ներկայացնել մի քանի եղանակներ, որոնց միջոցով կարելի է բարձրացնել երեխաների անվտանգությունը, դաստիարակել անվտանգ մշակույթ տանը և շրջապատում

Ծնողական ժողովի անցկացման
Պ լ ա ն 2

1. Ներածական խոսք
2. Բլից-հարցման թերթիկ ծնողների համար
3. Ակտիվացնող խաղ «Կույրը և ուկեկցորդը»
4. Աշխատանք խմբերում: Քննարկում
5. Ամփոփում

Ծնողական ժողովի ընթացքը

1. Ներածական խոսք

Մանկավարժ.

Այսօր մեր հասարակության մեջ ստեղծված սոցիալական և բնապահպանական իրավիճակն անհանգստացնող է: Հատկապես մեզ անհանգստացնում է կրտսեր տարիքի երեխաների անվտանգությունը: Երեխան կարող է հայտնվել տարբեր կենցաղային իրավիճակներում, որոնցում նա կարող է ուղղակի շփոթվել, խուճապի մատնվել: Մենք՝ մանկավարժներս և ծնողներս, կփորձենք պատասխանել հետևյալ պարզ հարցին. «Ինչպե՞ս ապահովել մեր երեխաների անվտանգությունը և պահպանել կյանքն ու առողջությունը տանը, դպրոցում և շրջակա միջավայրում»:

Եկեք միասին գտնենք այս հարցի պատասխանը:

Ի՞նչ է անվտանգությունը: *(Ծնողների պատասխանները)*

Ինչպե՞ս պետք է ծնողը ապահովի իր երեխայի անվտանգությունը: *(Ծնողների պատասխանները)*

Ծնողներիպատասխաններից հետո նրանց հետ քննարկեք, թե ինչպես կարելի է.

- երեխաներին տալ որոշակի գիտելիքներ անվտանգության համընդհանուր նորմերի վերաբերյալ,
- երեխաներին սովորեցնել համարժեք և գիտակցված

գործողությունների միջոցով դիմակայել ստեղծված արտակարգ իրավիճակներին.

- երեխաների մեջ ձևավորել ինքնուրույնություն և պատասխանատվություն:

Մեծահասակների խնդիրն է՝ երեխաներին նախապատրաստել տարաբնույթ վտանգավոր իրավիճակներից դուրս գալուն: Նախադպրոցական տարիքից սկսած երեխաներին պետք է սովորեցնել նման իրավիճակներում կիրառվող վարքի կանոնները և հմտությունները:

Մանկապարտեզում և դպրոցում սկսված անվտանգության հարցերով երեխայի դաստիարակությունը պետք է նաև շարունակվի ընտանիքում, քանի որ անվտանգության հարցերին համալիր մոտեցումը (ընտանիք-դպրոց-մանկապարտեզ) կարող է կրկնապատկել ակնկալվող արդյունքը:

Սակայն առաջին հերթին պետք է սովորենք մենք՝ մեծահասակներս:

Հարգելի ծնողներ, օրինակ՝ գիտեք թե ինչ պետք է անել ծխապատված գոտում հայտնվելու դեպքում, ինչ է տարհանումը կամ Ձեզ ծանոթ է հետևյալ իմաստուն կանոնը, «Երբ մտնում ես որևէ շենք կամ շինություն, հետ նայիր, արդյոք կարող ես այդտեղից արագ և անվտանգ դուրս գալ»:

Հարցեր ծնողներին

- Ձեր բնակելի շենքում որտեղ են գտնվում պահուստային ելքերը:
- Ձեր աշխատավայրում որտեղ է գտնվում կրակմարիչը:
- Երեխաների անվտանգության հարցերով ուսուցման որ հարցերն եք առավել կարևորում:

2. Բլից-հարցման թերթիկ ծնողների համար

Մանկավարժ.

Իսկ այժմ ես առաջարկում եմ այսպիսի խաղ խաղալ:

Բաժանվենք 3 խմբի և փորձենք պատասխանել առաջադրված հարցերին:

Հարց 1. Ձեր գործողությունները բնակարանում գազի արտահոսք

բացահայտելու (զգալու) դեպքում:

Պատասխան 1. Չմիացնել էլեկտրական անջատիչները, լուցկի չվառել, բացել պատուհանները և օդանցքերը, ահազանգել գազի ծառայություն (104) կամ փրկարար ծառայություն (911 կամ 101), տեղեկացնել հարևաններին գազի արտահոսքի մասին և այլն:

Հարց 2. Թվարկեք հրդեհ առաջանալու դեպքում բնակարանում Ձեր գործողությունները (ներկայացրեք ստեղծված իրավիճակը, հրդեհի առաջացման պատճառները):

Պատասխան 2. Չբացել պատուհանները, չմարել էլեկտրական սարքերը ջրով, շնչել թաց գործվածքի միջոցով, շարժվել դեպի ելքը կիսածալված ոտքերով, լքել տարածքը, փակել դուռը, ահազանգել փրկարար ծառայություն (911 կամ 101 հեռախոսահամարով):

Հարց 3. Նշեք անծանոթ շան հետ վարվելու կանոնները:

Պատասխան 3. Ձեռք չտալ անծանոթ շանը (ընդհանրապես՝ անծանոթ կենդանիներին), հատկապես, երբ նա սնունդ է ընդունում կամ պաշտպանում է իր ձագերին, չհրել և չքաշքշել (անգամ կատակով) շան տիրոջը, երբեք սևեռուն հայացքով չնայել շան աչքերի մեջ, չփախչել նրանից կամ չշրջվել մեջքով դեպի նա: Փորձել հնարավորինս արագ հեռանալ:

3. Ակտիվացնող խաղ «Կույրը և ուղեկցորդը»

Մանկավարժ.

Իսկ այժմ խումբը բաժանվում է զույգերի: Զույգերը բաժանվում են առաջին և երկրորդ համարների: Առաջին համարի խաղացողները կատարում են «կույրի» դերը, իսկ երկրորդները՝ «ուղեկցորդի»: Որոշվում է երթուղին, ստեղծվում են արհեստական արգելքներ աթոռներից (նստարաններից) և այլ առարկաներից:

Ձեր խնդիրն է. հաղթահարել ուղենշված երթուղին, յուրաքանչյուրը կատարելով իր դերը («ուղեկցորդը» առաջնորդում է «կույրին»):

Մանկավարժ.

Հարց 1. Ինչպիսի՞ զգացողություններ ունեցան «կույրերը»:

Պատասխան. Անվստահություն, վախ, խուճապ, հանգստություն,

ապահովություն (եթե վստահում է ուղևարին) և այլն:

Հարց 2. Ինչպիսի՞ զգացողություններ ունեցան «ուղեկցորդները»:

Պատասխան. Պատասխանատվություն և անհանգստություն «կույրի» համար և այլն:

Ի՞նչ եք կարծում, իսկ երեխա և ծնող հարաբերություններում ո՞վ՝ ու՞մ դերն է կատարում: Ո՞վ է «կույրը» և ո՞վ՝ «ուղեկցորդը»:

Իհարկե, այստեղ «կույրը»՝ երեխան է, իսկ «ուղեկցորդը» - ծնողը:

Գաղտնիք չէ, որ մենք անհանգստանում և հոգ ենք տանում մեր փոքրիկների մասին՝ աշխատելով հեռու պահել նրանց տարբեր վտանգներից: Իսկ ավելի ճիշտ չէ՞ր լինի նրանց սովորեցնել անվտանգ վարքի կանոններն ու հմտությունները, և սկսել այդ ուսուցումը նախադպրոցական տարիքից:

4. Ամփոփում

Մանկավարժ.

1. Ի՞նչ տվեց Ձեզ այսօրվա հանդիպումը: (Ծնողների պատասխանները)
2. Ի՞նչ եզրակացության հանգեցիք: (Ծնողների պատասխանները)
3. Ի՞նչ այլ ձևերով կարելի է օգնել երեխաներին կարևորել անվտանգությունը տանը և շրջապատում

Դիմելով Ձեզ՝ պետք է խնդրեմ, որ այսուհետև չանտեսեք անվտանգության կանոնների պահպանումը տանը և դրսում: Օրինակ ծառայեք երեխաներին: Անվտանգության կանոնների ուսումնասիրությունը սկսեք երեխաներից: Թող Ձեր բոլոր գործողությունները և յուրաքանչյուր օրը լինեն անվտանգ:

Երեխաների ԱՌՆ կրթությունը թեմատիկ նկարների միջոցով[2]: Անվտանգությունը տանը և շրջակա միջավայրում

Հարգելի ծնողներ,

Ուրախ և ուսուցողական նկարների միջոցով դուք կօգնեք ձեր երեխաներին ավելի լավ յուրացնել տանը և դպրոցում անվտանգ վարքի կանոնները: Չէ՞ որ փոքրիկները սիրում են այն, ինչ ավելի գրավիչ և հետաքրքրաշարժ է: Ուստի, առաջադրված խնդիրն ավելի լավ կընկալեն խաղի և զվարճանքի միջոցով:

Ուրեմն, հարգելի ծնողներ, պահպանեք երեխաների հետաքրքրությունն իրենց անվտանգության հարցերի հանդեպ: Թույլ տվեք նրանց ներկայացված նկարների նկարագրությունների, հանելուկների, իրենց հորինած պատմությունների միջոցով յուրացնել անվտանգության կանոնները:

Ներկայացված նկարներն ուղեկցվում են փոքրիկ նկարագրություններով, որոնք կարող են օրինակ ծառայել ներկայացված թեմաներով ուրախ և ուսուցողական պարապմունքներ անցկացնելու համար:



Փողոցն անցնում են հետիոտնի համար նախատեսված վայրում:



Երեխաներին չի թույլատրվում մոտենալ և, հատկապես, ձեռք տալ գազօջախին:

2 Նկարները վերցված են http://bezopasnost-detej.ru վեբ կայքից:

Էլեկտրական սարքերին չի կարելի ձեռք տալ թաց ձեռքերով:



Չի կարելի վարդակի մեջ որևէ իր խոթել: Դա խիստ վտանգավոր է:

Լուցկին և կրակայրիչը խաղալիք չեն: Փոքրիկ լուցկուց կարող է մեծ հրդեհ բռնկվել:

Իսկ ձեր երեխան լողալ գիտի՞: Եթե այո, ապա նրան լողալ թույլատրեք միայն այդ նպատակով հատկացված, անվտանգ տեղերում:

Մի թույլատրեք ձեր երեխային կենդանաբանական այգում մոտենալ և, հատկապես, կերակրել կենդանիներին: Դա ոչ միայն վնասակար է կենդանիների համար, այլև վտանգավոր՝ ձեր երեխայի համար:

Լողափին երեխայի գլուխը ծածկեցեք գլխարկով
նրան արևահարվելուց զերծ պահելու համար:



Իսկ ձեր երեխան գիտի՞, թե
լուսակրի ո՞ր ազդանշանի
դեպքում են անցնում փողոցը:

Մի թույլատրեք ձեր
երեխաներին խաղալ փողոցի
երթևեկելի մասին մոտ: Դրա
համար գոյություն ունեն
խաղահրապարակներ և
բակեր:

Սովորեցրեք ձեր երեխային
ավտոբուսը և տրոլեյբուսը
շրջանցելու կարգը:

Հարգելի ծնողներ: Մի թույլատրեք ձեր երեխային ձեռք տալ էլեկտրական սարքերին և լարերին: Չի թույլատրվում մեկ վարդակին միացնել երկուսից ավելի էլեկտրական սարքեր: Դա խիստ վտանգավոր է:

Մի թույլատրեք ձեր երեխային «խաղալ» կենցաղային քիմիայի, դեղորայքի և դիմահարդարման պարագաների հետ: Դա կարող է պատճառ դառնալ երեխայի թունավորման:

Ես հրշեջ եմ,
Անվախ ու քաջ եմ:

Հավելված 1.

Հուշաթերթիկ ծնողների համար

Երեխաների համար հնարավոր վտանգները ձեր բնակարանում (տանը).

1. վարդակները,
2. ջեռուցման մարտկոցները, հատկապես ջեռուցման շրջանում (երեխան կարող է մարտկոցի խոռոչների մեջ խոթել ձեռքը կամ ոտքը),
3. հատակով մեկ սփռված էլեկտրալարերը,
4. դռները (երեխաները շատ են սիրում դռները բացել-փակել),
5. կենցաղային էլեկտրական սարքերը,
6. խոհանոցը, որը տան ամենավտանգավոր վայրն է (մտածեք, թե ի՞նչ վտանգներ են պարունակում էլեկտրական թեյնիկը, լվացքի մեքենան, սառնարանը, էլեկտրական կամ գազի օջախը, ապակե սպասքը, աղբամանը և այլն),
7. սենյակների պատուհանները (որտեղից երեխաները սիրում են դուրս նայել, եթե անգամ դրա համար պետք է բաձրանալ պատուհանագոգին, աթոռին կամ սեղանին),
8. սեղանի սփռոցը (երեխան հեշտությամբ կարող է քաշել սփռոցի ծայրից և վայր գցել այն ամենն, ինչ սեղանի վրա է),
9. մանր իրերը (դրանք երեխաների համար շատ գրավիչ են, և նրանք սիրում են խաղալ դրանցով, անգամ՝ համը փորձել),
10. դեղորայքը (հատկապես գեղեցիկ փաթեթավորումով), ինչը երեխաները, կոնֆետի տեղ ընդունելով, կարող են ուտել,
11. լոգարանը, հատկապես եթե այն լցված է ջրով:

Հարգելի ծնողներ, առաջարկում եմ ձեզ շարունակել վտանգների այս ցուցակը, ելնելով ձեր բնակարանի առանձնահատկություններից: Համոզված եմ, որ անհապաղ կձեռնարկեք բոլոր անհրաժեշտ միջոցները ձեր բնակարանը հնարավորինս անվտանգ դարձնելու համար:

Հավելված 2.

Հուշաթերթիկ ծնողների համար

1. Երեխաների համար հնարավոր վտանգները գյուղական բնակավայրում (ամառանոցում).

- կովերի նախիրը, ոչխարների հոտը,
- վառարանը,
- ջրհորը,
- գետակը,
- թոնրատունը,
- կենդանիները,
- այգեգործական գործիքները,
- ջրի մեծ տարողությունները, ապակիները և այլ իրեր:

Հարգելի ծնողներ, շարունակեք վտանգների ցուցակը:

Երեխան պետք լավ հիշի, որ չի կարելի.

- մոտենալ կովերի նախիրին և անծանոթ կենդանիներին,
- բացել վառարանի դռնակը կամ ձեռք տալ դռնակի կափարիչին (խուփին),
- առանց մեծահասակների մտնել թոնրատուն կամ խորդանոց,
- մոտենալ ջրհորին, ջրավազանին կամ մոտակա գետակին, նայել ջրհորի մեջ կամ մտնել գետը:

Հարգելի ծնողներ, շարունակեք արգելանքների թվարկումը:

2. Ջրավազանի կամ գետի ափին հանգստանալու ժամանակ վտանգներից խուսափելու պարզագույն քայլեր

Ծնողը (մեծահասակը) նախապես պետք է.

- ուսումնասիրի հանգստի գոտին և բացահայտի բոլոր այն վտանգները, որոնք կարող են արտակարգ պատահարի պատճառ դառնալ,

- մաքրի տարածքը փշրված ապակուց, սրածայր քարերից և զանազան աղբից,
- հանգստավայրը ծավալի ստվերում՝ ծառերի տակ, որպեսզի երեխաներին պաշտպանի արևի ուղիղ ճառագայթներից,
- չթույլատրի երեխային կտրուկ մտնել ջրի մեջ, քանի որ դա կարող է սրտի աշխատանքի խախտման և ջղաձգության պատճառ դառնալ,
- չթույլատրի երեխային երկար ժամանակ մնալ սառը ջրի մեջ, ինչը կարող է պատճառ դառնալ նրա գերսառեցման,
- հետևի, որպեսզի երեխան հերթագայի լողը ակտիվ խաղերի (շարժախաղերի) հետ ջրից դուրս:

Հարգելի ծնողներ, պահպանեք մաքրություն և կարգուկանոն նաև հանգստավայրը լքելուց առաջ: Եղեք օրինակելի ձեր երեխաների համար: Պահպանեք բնությունը:

Հավելված 3.

Ուղերձներ ծնողներին

1. Թույլ տվեք, որ ձեր երեխաները սովորեցնեն ձեզ:
2. Ծառայություն «911»՝ հարյուր փորձանք, պատասխան՝ մեկ:
3. Հարգելի ծնողներ, մի քանի րոպե ձեր երեխաների հետ խոսեք անվտանգության կանոնների մասին: Հիշե՛ք, այդ րոպեները չափվում են նրանց կյանքի գնով:
4. Մի՛ թողեք երեխաներին առանց ուշադրության:
5. Հիշե՛ք, ձեր երեխաների կյանքը ձեր ձեռքերում է:
6. Աղետների ռիսկի նվազեցումը սկսվում է ընտանիքից:
7. Հարգելի ծնողներ, ձեր գիտելիքն ու փորձը երեխայի անվտանգ դաստիարակության լավագույն ուղեցույցներն են:
8. Եղեք օրինակելի ձեր երեխայի համար:
9. Եթե ուզում եք երեխայի մեջ դաստիարակել անվտանգ վարքագիծ, ինքներդ գործեք այդպես:
10. Երեխաների փրկությունը՝ ծնողների և մանկավարժների գիտելիքները և կարողություններն են:
11. Հրդեհից պաշտպանվելու ամենագործուն կանոնն է. «Ինքդ չդառնաս հրդեհի պատճառ»:
12. Հարգելի ծնողներ, արտակարգ իրավիճակներում խուճապի մի մատնվեք:
13. Ահազանգեք:
14. Հարգելի ծնողներ, անվտանգությունը դարձրեք ձեր երեխաների մտագործունեության առարկա, և աշխարհին «անվտանգ» մարդ կտաք:
15. Դաստիարակեք ձեր երեխաներին աջակցել հաշմանդամություն ունեցող երեխաներին և մեծերին՝ անհրաժեշտության դեպքում խուսափել վտանգից:

Հավելված 4.

Ընտանիքի աղետի պատրաստվածության պլան

Ուսումնասիրեք ներքոհիշյալ իրավիճակները և համապատասխան վանդակում դրեք պլյուս «+» նշանը դրական պատասխանի դեպքում և մինուս նշանը՝ բացասական պատասխանի դեպքում մինուս «-» :

	Գնահատում և պլանավորում
	Մենք ընտանիքում ժողով ենք անցկացրեցրել:
	Մենք բացահայտել ենք մեր տան յուրաքանչյուր սենյակի ամենա անվտանգ տեղերը (պատուհաններից, մեծ ու ծանր առարկաներից, որոնք կարող են ընկնել, և վառարանանման առարկաներից, որոնք կարող են բոցավառվել, հեռու):
	Մենք բացահայտեցել ենք մեր տան և շենքի հիմնական ու պահուստային ելքերը:
	Մենք գիտենք մեր տան պատասխանատու անձի/անձանց հեռախոսահամարը(ները) Այն է_____:
	Մենք գիտենք, թե տարհանման դեպքում որտեղ պետք է հանդիպենք. շենքում_____: փողոցում _____: Թաղամասի տարածքից դուրս _____:
	Բոլոր կարևոր փաստաթղթերի, հասցեների ու հեռախոսահամարների պատճենները մենք պահում ենք մեր տարհանման պայուսակում կամ մեր բնակավայրից դուրս ապրող հարազատների/պատասխանատու անձի մոտ:
	Մենք գիտենք, որ երկրաշարժից հետո հեռախոսից պետք է օգտվել ֆիզիկական վնասվածքի դեպքում: Մենք կօգտագործենք ռադիո ու հեռուստացույց՝ տեղեկություն ստանալու համար:
	Մենք գիտենք, որ տարեկան երկու անգամ պետք է ընտանեկան խորհուրդ անցկացնենք և ստուգենք մեր պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին:
	Մենք մեր գործողությունների մասին պատմում ենք ուրիշներին:
	Արձագանքման կարողություններ և հմտություններ
	Բոլոր չափահասները և մեծահասակ երեխաները գիտեն ինչպես օգտագործել կրակմարիչը:
	Բոլոր չափահասները և մեծահասակ երեխաները գիտեն ինչպես փակել գազի, ջրի ծորակները և հոսանքազրկել բնակարանը:

	Մենք մասնակցել ենք արտակարգ իրավիճակներին պատրաստվելու, առաջին օգնություն ցուցաբերելու, պարզ որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու դասընթացների, կարող են հանգցնել կրակը, տիրապետում ենք կամավորական օգնության հմտությունների:
	Մենք քննարկել ենք մեր հարևանների հետ՝ ինչպես կարող ենք աջակցել իրար արտակարգ իրավիճակների դեպքում:
Ֆիզիկական պաշտպանություն	
	Մեր շենքը կառուցվել է սեյսմակայուն շինարարության պահանջներին համապատասխան, կամ այն հետազոտվել է որակավորված մասնագետների կողմից և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել այն վերանորոգելու կամ ամրացնելու համար:
	Մենք մեր շենքը պահպանում ենք խոնավությունից և այն պարբերաբար վերանորոգում ենք անհրաժեշտության դեպքում:
	Բարձր և ծանր կահույքը, սարքավորումները, լուսավորող սարքերը և այլ իրերը մենք ամրացրել ենք պատերին, հատակին և առաստաղին, քանի որ ցնցումների ժամանակ դրանք կարող են ընկնել վնասել մեզ և մեր երեխաներին:
	Մենք փականներ ենք ամրացրել խոհանոցի պահարանների վրա, ապահովել ենք հեռուստացույցի և կենցաղային էլեկտրական առարկաների անվտանգությունը, և ամրացրել ենք նկարները ապահով կեռիկներով՝ նվազեցնելով հնարավոր վտանգները:
	Մենք ունենք կրակմարիչ, այն լիցքավորում ենք տարեկան մեկ անգամ:
	Մենք ապահովել ենք ընտանեկան, մշակութային և նյութական արժեքների ու ժառանգաբար փոխանցվող իրերի հնարավոր պահպանությունը, որպեսզի դրանք չկորեն:
	Մենք սահմանափակել ու մեկուսացրել ենք այն վտանգավոր նյութերը (օրինակ՝ քիմիական նյութերը), որոնք կարող են թափվելով վնասել մեզ:
	Մահճակալների մոտ մենք պահում ենք մեր լապտերիկը և մարտկոցները:
	Մենք գիտենք, որ արտակարգ իրավիճակներում չի կարելի լուցկի կամ կրակայրիչ օգտագործել, քանի դեռ չենք համոզվել, որ գազի արտահոսք չկա:
	Մենք պաշտպանել ենք մեզ պատուհանների ապակիների ջարդվելու դեպքում առաջացող փշրանքներից՝ ծածկելով ապակիները հատուկ թափանցիկ թաղանթով, հեռացնելով բազմոցը և մահճակալը:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Թերեզա Դիլբարյան

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուղեցույց նախադպրոցական կրթական հաստատությունների և տարրական դպրոցի մանկավարժների համար

Խմբագիրներ՝ Արա Բարսեղյան, Տիգրան Թովմասյան
Ձևավորողներ՝ Վահագն Սարգսյան, Վահան Ալավերդյան

Tereza Dilbaryan

DISASTER RISK REDUCTION EDUCATION

COOPERATION OF EDUCATORS AND PARENTS FOR SAFER EDUCATION

Guide for preschools and elementary school teachers

Editors: Ara Barseghyan, Tigran Tovmasyan
Designers: Vahagn Sargsyan, Vahan Alaverdyan

Humanitarian Aid and Civil Protection

unicef

Սույն ձեռնարկը մշակվել և տպագրվել է Եվրամիության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված «Աջակցություն Հարավային Կովկասի խոցելի համայնքներում և հաստատություններում աղետների ռիսկի նվազեցմանը» ծրագրի շրջանակներում: Ձեռնարկում արտահայտված կարծիքները հեղինակային են և որևէ ձևով չեն արտահայտում Եվրամիության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեսակետները:

This publication has been produced within the framework of "Support Disaster Risk Reduction amongst Vulnerable Communities and Institutions in Southern Caucasus" project, funded by the European Union and implemented by the United Nations Children's Fund (UNICEF). The contents of this publication are the sole responsibility of the authors and can in no way be taken to reflect the views of the European Union and UNICEF.

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2016